ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, Ֆաքս՝ (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

«21» 08 2020 թ.

N 01/61-15510

«ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ն. ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻՆ
ՀՀ Արարատի մարզ գյուղ Բուրաստան Չարենցի 2

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրն միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 19.11.20 թվականին կնքված «ԵՔ-ՄԱԾՁԲ-19/118-1» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետերի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Դավիթ Բեկ փողոցի հարևանությամբ գտնվող նորաստեղծ թաղամասի բնակելի տների կոյուղագծի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով»:

Պայմանագրով նախատեսված 352000 (երեք հարյուր հիսուներկու հազար) ՀՀ դրամից Ընկերությանը կատարված աշխատանքների դիմաց օրենքով սահմանված կարգով վճարվել է 142000 (մեկ հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամ:

Երևանի քաղաքապետարանը համապատասխան գրություններով դիմել է Ընկերությանը՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի Հավելված 1-ի տեխնիկական բնութագրի 1-ին կետի համաձայն՝ «Հեղինակային հսկողությունն ընթանում է ամբողջ շինարարության ընթացքում՝ ապահովելով շինարարության իրականացման համապատասխանությունը հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերին», սակայն Ընկերություն փաստացի չի կատարել վերը նշված պահանջը:

Պայմանագրերի 2.1.3 կետի «ա» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է նշված պայմանագրերով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի (210000 երկու հարյուր տաս հազար ՀՀ դրամի չափով) հրաժարվում է Ընկերության հետ կնքված աշխատանքների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատ. Է. Կիրակոսյան
011514129